

Պետության կողմից <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> փակ բաժնետիրական ընկերությանը դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին

ք. Երևան

08. 01 2018 թ.

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ս. Ամիրխանյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Ալոյանի (այսուհետ՝ Ընկերություն), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով 2017 թվականի դեկտեմբերի 28-ի <<<< 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> թիվ 1717-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), հեռուստատեսային ծառայությունների ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Ընկերությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ 99 200 000 (իննսունինը միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, իսկ Ընկերությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել օրենքով և սույն պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2 Ընկերության կողմից իրականացվող Ծրագրը ներկայացված է սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

- 2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝
 - 2.1.1 ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Ընկերության կողմից իրականացվող ծրագրի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
 - 2.1.2 օրենքով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված ծրագիրը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Ընկերությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1. կետով նախատեսված տուգանքը.
 - 2.1.3 առանց իրականացված ծրագրի արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - ա. ընկերությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. ընկերությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4 սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2 ընկերությունը իրավունք ունի՝

2.2.1 պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3 Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1 ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել ընկերությանը.

2.3.2 կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3 իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4 գործունեության արդյունքների վերաբերյալ ներկայացված եռամսյակային և տարեկան հաշվետվությունները քննարկել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված աշխատանքը համապատասխանում է Ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Ընկերությանը: Նշված ընթացքում չծանուցելու դեպքում՝ հաշվետվությունը համարվում է ընդունված:

2.4. Ընկերությունը պարտավոր է՝

2.4.1 իրականացնել Ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2 պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով.

2.4.3 կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4 սույն պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել Ծրագրի իրականացման մասին եռամսյա հաշվետվություն՝ մինչև եռամսյակի վերջին ամսվա հաջորդող ամսվա 25-ը, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ տարեկան հաշվետվություն՝ ավարտից հետո 30 օրվա ընթացքում.

2.4.6 սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովելու Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7 պետական մարմնի կողմից առանձին Ծրագրի մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Ընկերությունը պարտավորվում է անվճար, Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8 Ծրագրով նախատեսված ծառայությունները ձեռք բերել <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության

կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան և մրցույթի արդյունքում տնտեսված ֆինանսական միջոցները օգտագործել միայն ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի համաձայնությամբ:

3. Մոնիթորինգ

- 3.1 Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
- 3.2 Մոնիթորինգն իրականացնում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
- 3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Ընկերությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:
- 3.4 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
- 3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Ընկերությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ ու բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

- 4.1 Կազմակերպության կողմից Ծրագիրն իրականացվում է հաշվետու տարվա ընթացքում, իսկ վճարումներն իրականացվում են Պետական մարմնի կողմից ՀՀ պետական բյուջեի եռամսյակային համամասնություններին համապատասխան, պայմանագրի հավելված 2-ի համաձայն:
- 4.2 Յուրաքանչյուր եռամսյակի համար նախատեսված գումարը փոխանցվում է Ընկերության հաշվարկային հաշվին որպես կանխավճար, բայց ոչ ուշ քան տվյալ եռամսյակի 2-րդ ամսվա 10-ը՝ համապատասխան հավելված 2-ի:

5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1 Սույն պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված Ծրագրի չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Ծրագրի համար նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով, իսկ տույժերը՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Ընկերությունը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Ընկերությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

- 6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Ծրագիրը և վճարման ժամանակացույցը հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2 Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումները իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.3 Սույն պայմանագիրը կնքվում է 2 /երկու/ օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները



Միջազգային ռադիոհաղորդման համակարգի ղեկավար՝ Ս. Ամիրխանյան

Միջազգային ռադիոհաղորդման համակարգի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ՊԿՀ

ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 3/3

«ՖՆԱ գործառնական վարչություն»

h/h 900011001139

ՀՎՀՀ 02565518



Գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝

«Հայաստանի հեռուստատեսային և

ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ

ք. Երևան, Գ. Հովսեփյան փ. 95

Ամերիաբանկ ՓԲԸ

h/h 1570027609970100

ՀՎՀՀ 01501898

Հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալման ծրագիր

1. Ընդհանուր դրույթներ

«Սեփականությունը համարվող թվային հեռարձակման ցանցը բաղկացած է թվով 211 հեռուստակայանից, որոնցից 64-ում հանրապետական սփռման մուլտիպլեքսի հաղորդումը իրականացվում է օպտիկա-մանրաթելային համակարգով, իսկ թվով 147-ում՝ արբանյակային հեռարձակման ցանցի միջոցով:

Վերջիններս դժվար հասանելի են օպտիկա-մանրաթելային համակարգին և հիմնականում գտնվում են բարձր լեռնային ու սահմանամերձ բնակավայրերում: Նշված 147 հեռուստակայաններում մուլտիպլեքսը հասցնելու արբանյակային կապի միջոցը այլընտրանք չունի:

Միաժամանակ, արբանյակային հեռարձակումը ծառայում է նաև բնակավայրերից դուրս տեղակայված առանձնատների, հանգստյան գոտիների, զորամասերի և այլնի համար որպես հանրապետական սփռման մուլտիպլեքսի ֆիքսված անհատական արբանյակային ընդունման հիմնական միջոց:

Բացի այդ, արբանյակային կապը ծառայում է նաև որպես պահուստ թվով 64 հեռուստակայաններում օպտիկա-մանրաթելային համակարգի հնարավոր խանգարումների դեպքում:

«Կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի նիստի թիվ 24 արձանագրային որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման գործընթացի իրականացման» ծրագրի համաձայն տեղադրված են արբանյակային հեռարձակման կազմակերպման համար պահանջվող բոլոր հաղորդիչ-ընդունիչ սարքավորումները:

Ձեռք բերված սարքավորումներով արբանյակային ցանցի կենսունակությունը հնարավոր է իրականացնել միայն արբանյակային կապի օպերատորներից որևէ մեկից վարձակալելով համապատասխան ունակություն:

Արբանյակային ունակությունը վարձակալված է 2015 թ-ի հունիսից մինչև 2020 թ-ի մայիսի 31-ը ընկած ժամանակահատվածի համար՝ ֆինանսական միջոցների տնտեսման նպատակով, մրցութային կարգով ընտրված արբանյակային օպերատորի հետ կնքելով երկարաժամկետ պայմանագիր:

2. Ֆինանսական գնահատականները

Արբանյակային ունակության վարձակալության նպատակով «Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերության կողմից անց է կացվել մրցույթ, որի արդյունքներով հաղթող է ճանաչվել ամերիկյան INTELSAT GLOBAL SALES & MARKETING LTD ընկերությունը:

INTELSAT GLOBAL SALES & MARKETING LTD ընկերության հետ կնքվել է արբանյակային ունակության վարձակալության պայմանագիր : 2018-2019թթ. համար սպասարկման տարեկան գումարը կկազմի յուրաքանչյուր տարի 208 800.0 ԱՄՆ դոլար :



Մշակույթի, հուշարձանաբանության և սպորտի նախարարության վարժարանի տնօրենի պաշտոնակատար

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ՊԿ

ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 3/3

ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն

h/h 900011001139

ՀՎՀՀ 02565518



Գլխավոր տնօրենի պաշտոնակատար

Գ. ՆԱՂԻԱՆ

ՀՀ առևտրի և տնտեսական կապերի նախարարություն

«Հայաստանի հեռուստատեսային և

ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ

ք. Երևան, Գ. Հովսեփյան փ. 95

Ամերիաբանկ ՓԲԸ

h/h 1570027609970100

ՀՎՀՀ 01501898

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

աճողական, հազար ՀՀ դրամ

N ը/կ	անվանումը	Ֆինանսավորման գումարը ՀՀ 2017թ. բյուջետային միջոցների հաշվին, ըստ ամիսների												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալություն	24 000	24 000	24 000	48 000	48 000	48 000	75 000	75 000	75 000	99 200	99 200	99 200	99 200



Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Ամիրխանյան



Գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Աղոյան

«Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ՊԿ»

թ. Երևան, Վ. Սարգսյան փ. 3/3

«Հայաստանի հեռուստատեսային և

ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ

թ. Երևան, Գ. Հովսեփյան փ. 95

Ամերիաբանկ ՓԲԸ

h/h 900011001139

h/h 1570027609970100

ՀՎՀՀ 02565518

ՀՎՀՀ 01501898